

ՄԵՐ ԿՅԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ՆՇԱՆԱԳՐԱՆԸ

Posted on April 1, 2013 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Հովասափյան, Բեռլին, Ապրիլ 2013

✘ Սույն թվականի մարտ 9-ին Գերմանիայի Պոտսդամ քաղաքում կազմակերպված համագումարում դասախոսություն կարդալու համար Ամերիկայից Գերմանիա հրավիրված Տիկին Պրոֆեսոր Փիրոմյանը բանախոսեց Նայն Բեռլինի Հայ Համայնքի «Հայ Տան» սրահում: Որքան էլ որ մեծ է մեր բոլորիս հարգանքը Տիկին Փիրոմյանի անձի և երկար տարիների կատարած ցեղասպանությանը նվիրված նրա աշխատանքների նկատմամբ, ապա դժվար է համաձայնվել նրա այն մտքի հետ, որ այսօր հայության՝ մանավանդ երիտասարդ սերնդի, լոգունգը պետք է լինի նաև պահանջատիրությունը:

Սամվել Հովասափյան, Բեռլին, Ապրիլ 2013

✘ Սույն թվականի մարտ 9-ին Գերմանիայի Պոտսդամ քաղաքում կազմակերպված համագումարում դասախոսություն կարդալու համար Ամերիկայից Գերմանիա հրավիրված Տիկին Պրոֆեսոր Փիրոմյանը բանախոսեց Նայն Բեռլինի Հայ Համայնքի «Հայ Տան» սրահում: Որքան էլ որ մեծ է մեր բոլորիս հարգանքը Տիկին Փիրոմյանի անձի և երկար տարիների կատարած ցեղասպանությանը նվիրված նրա աշխատանքների նկատմամբ, ապա դժվար է համաձայնվել նրա այն մտքի հետ, որ այսօր հայության՝ մանավանդ երիտասարդ սերնդի, լոգունգը պետք է լինի նաև պահանջատիրությունը:

Թող հարգելի տիկին Փիրոմյանը ինձ ների ասել, որ եթե չի կարելի նման հայտարարությունը պոպուլիստական համարել, ապա այն այդպես էլ հնչում է և այդ պատճառով էլ արժանանում է ամբոխի կողմից ծափահարության:

Իսկապես, մենք սփյուռքահայերս, մեծ մասամբ բոլոր կողմերից ապահովված լինելով, մեզ ու մեր երեխաների համար ստեղծելով և մեզ պաշարելով աշխարհքի շատ ու շատ բարիքներով, երբեմն մոռանում ենք, թե ո՞վ ենք մենք, թե ո՞վ է մեր պահանջների, արարքների, շարժումների հնարավոր հետևանքների կրողը: Այո, մենք սփյուռքահայերս կարող ենք շատ պահանջներ ներկայացնել, որովհետև մեր երեխան չէ, որ Արցախում կանգնած է դիպուկահարների դեմ-դիմաց, մեր երեխաները չեն, որ վաղը հնարավոր պատերազմի դեպքում, առաջինը իրենց վրա են կրելու թշնամու հարվածը. մեր երեխաները չեն, որ պետք է պատերազմի դաշտ ուղարկվեն: Մեր տունը չէ, որ ռմբակոծվելու է: Ես չեմ ցանկանում պաշտպանել հայ- թուրքական արձանագրությունները, ոչ էլ Սերժ Սարգսյանին, բայց ժամանակին նա անդրադարձել է նման հնարավորությանը:

Եվ վերջապես մեր երեխան չէ, որ աղետի գոտու սառնամանիքը պետք է քաղցած, հիվանդ, մրսած հաղթահարի, մեր մայրը, քույրը, երեխան չէ, որ թուրքիա է գնացել աշխատանք որոնելու, եղբայրը չէ, որ չկարողանալով այլևս իր ընտանիքի, երեխաների

հոգսերը տանել և տառապանքը տեսնել, լքել է հայրենիքը և կամովին արքայի է գնացել: Ապա գյուղացու կյանքը, ապա աշխատավորի, ապա արտագաղթողի հոգեկան վիճակը, ապա նրա, ապա սրա, ապա ամբողջ ժողովրդի բազմապիսի ու բազմաբովանդակ խնդիրները, որ գոյություն ունեն այսօր Հայաստանում, որոնք անհապաղ լուծում են պահանջում:

Այստեղ կարելի է հիշել մի դրվագ Եղիշե Չարենցի 1925-26 թվականին արտասահման կատարած այցելությունից: Ինչ որ մի գրույցի ժամանակ նրա գրուցակիցը ցանկանում է իմանալ Հայաստանում գրականության վիճակի մասին, Չարենցը պատասխանում է. «Լսեք, եթե մեկի բնակարանում կրակ է բռնկվել և ամեն ինչ վառվում է, ապա տան տիրոջ առաջին հոգսը այն է լինում, որ նախ փրկի իր և իր երեխաների կյանքը, իսկ հետո, եթե ժամանակ է լինում, ապա նա մտածում է փրկել նաև որոշ կարևոր իրեր»:

Իհարկե չի կարելի այսօրվա մեր իրականությունը համեմատել 1925 թվականների իրականության հետ: Բայց այսօր էլ ինչ որ ձևով վառվում է մեր տունը և կորուստները դառնում են անդարմանելի, համարյա անուղղելի: Ուրեմն որ՞ն է մեր այսօրվա կյանքի հրամայականը: Թուրքին ու այլ պետություններին պահանջներ ներկայացնել, սահմանների փոփոխություն, միջազգային պայմանագրերի վերանայում և այլն պահանջել, կառչել՝ ցեղասպանության միջազգային ճանաչումից, թե, փորձել նախ և առաջ մարել այն կրակը, որի ծուխը շնչահեղձ է անում հայաստաբնակ մեծ մասամբ գյուղացի և աշխատավոր բնակչությանը, մանավանդ նրանց, ովքեր սոսկալի կարիքի մեջ են:

Բայց մենք ինչպե՞ս ենք ցանկանում Թուրքիային պահանջ ներկայացնել, երբ ամենահասարակը և ամենակարևորը՝ մենք չենք կարողացել ու չենք կարողանում մեր տունը կարգի բերել և քսան տարի անկախությունից հետո էլ Հայաստանը դարձյալ որերրորդ անգամ դարձել է որբի ու արտագաղթի երկիր: Երբ թուրք գեներալը մեր երեսին շարտում է՝ «մեկ միլիոն են մնացել, քաղցած են և դեռ մեզ պահանջ են ներկայացնում»:

Այդ ինչպե՞ս է, որ Սերժ Սարգսյանը նման խոսքերից հետո օտարազգի իր գործընկերների հետ հանդիպման ժամանակ չի կարմրում և իրեն դեռ այդ երկրի նախագահն է ներկայացնում: Եթե մենք սփյուռքահայերս կարողանայինք ժամանակին և տեղին համարձակություն ցուցաբերել և մեր նախագահների ու նախարարների երեսին ասել, թե, այդ ի՞նչ էք անում, թե, դեպի ո՞ր եք տանում երկրին և ժողովրդին, դեռևս ինչ որ բան այն չէր լինի, ինչպես որ է:

Տիկին Փիրումյանը իր ուսումնասիրությունները կենտրոնացրել է ցեղասպանության անդրադարձին հայ գրականության մեջ և նշեց, որ սովետական տարիներին արգելված էր խոսել ցեղասպանությունից, այո, դա իրոք որ այդպես էր, բայց նաև գրողների այն սերունդը, ովքեր սփյուռքում համամարդկային գրական երկեր ստեղծեցին,

խուսափում էին ուղղակի անդրադառնալ այդ թեմային: Իրոք, ինչպե՞ս կարելի է արհավիրքի թեմայի շուրջ գրական գործ ստեղծել, դա անհնար է: Շահան Շահնուրը այդ սերնդի ներկայացուցիչներից մեկն էր, ում երկերի թեման, ցեղասպանության հետևանքներն էին, բայց ոչ ուղղակի ցեղասպանությունը:

Իսկ այդ ցավատանջ՝ ցեղասպանության ճանաչման հարցը, որի մասին ներկայիս երիտասարդ սերունդը այլևս լսել չի ցանկանում:

Ժամանակին Հրանդ Դինկը գրեց՝

«Հաջողության հասնելու բանալին նրա մեջ է, որպեսզի հայերը առկա պայմաններին մի նոր դիտանկյունից դիտեն, օրինակ՝ 1915 թվականը: Աշխարհի հայերը շատ լավ գիտեն 1915 թվականի ողբերգության մասին: Այդ իրականությունը բոլորովին կախված չէ այն բանից, որ Թուրքիան, կամ, մի այլ պետություն նրանց տեսակետը ընդունեն: Քանի որ այդ պատահարի անունը, այդ օրից սկսած, դրոշմված է հայերի հոգում, ինչպես քարի վրա փորագրված: Այդ պատճառով էլ, դրա ճանաչումը երրորդի, կամ նույնիսկ Թուրքիայի կողմից, չպետք է հայերի միակ նպատակը լինի: Լրիվ ընդհակառակը. ժամանակն է, որ ամեն մեկին, իր խղճի, կամ իր անխղճության հետ, միայնակ թողնել: Քանի որ, ով, երբևէ, այն ինչ պատահել է՝ ընդունի, կամ, ոչ, նա դա անելու է բացառապես իր խղճի համար: Եվ ի վերջո ամեն մի առանձին մարդու խիղճը իր հենարանն ունի մեր միասնական մարդկային լինելության մեջ: Ով պատմական իրողությունը չի ընդունում, իրեն ինչ որ չափով դուրս է թողնում մարդկայնությունից: Հայերի սխալն այն էր, որ նրանք իրենց ինքնահայացքը, իրենց ինքնությունը այդքան երկար տարիներ կապեցին ֆրանսիացիների, գերմանացիների, ամերիկացիների և ամենից առաջ թուրքերի կողմից ցեղասպանության ճանաչման հետ: Ամենահրատապ ժամանակն է, որ հայերը թողնեն այդ սխալները: Դրան պատկանում է նաև այն, որ հայերը «Թուրքերին» ազատեն իրեց ամենակարևոր դերից՝ որ նրանք ունեն հայի ինքնահայացքի և ինքնության ձևավորման հանար: Այդ ամենի համար հայերը շատ են տառապել: Հիմա ժամանակն է, որ մնացած մարդկությունը այդ հարցի պատճառով տառապի:

Հայերը շատ ժամանակ կորցրին... և իրենց ամբողջ էներգիան այս նպատակի համար ծախսեցին՝ աշխարհը պետք է թուրքերին ստիպի, ճանաչել ցեղասպանությունը:

Դրա փոխարեն պետք է հայերը ապագայում իրենց ինքնությունը այնպիսի ծրագրերի և այնպիսի հասկացողությունների վրա կառուցեն, որոնք այս ժողովրդին կվերադարձնեն իր հատկությունները և իր ստեղծագործական ուժերը: Բայց դրա համար կարևոր է հետևյալ կեցվածքը ընդունել. «Մենք առաքինությամբ կրելու ենք մեր ճակատագիրը, եթե հարկն է մինչև վերջ»: Քանի դեռ մենք այսպիսի կեցվածք չենք ընդունել, կմնանք մշտապես այն բանին շղթայված, որ ուրիշները ընդունեն ճշմարտությունը, իսկ սա մի սուկալի թակարդ է:

Շատ հեշտ է հայերի ինքնահայացքը ազատել «թուրքի» ազդեցությունից: Մենք պետք է


միայն հրաժարվենք, «թուրքին» մշտապես ստիպել: (Մենք այլևս նրա կարիքը չունենք): Որովհետև մեր ինքնահայացքի համար մի նոր աղբյուր արդեն կա, դա՛ Հայաստանի Հանրապետությունն է:» (Hrant Dink, Von der Sat der Worte, էջ 104-106)

Այո իրոք որ, արդեն մի նոր աղբյուր կա մեր ինքնության, մեր աշխարհայացքի և ինքնահայացքի ձևավորման համար և դա այսօրվա Հայաստանի Հանրապետությունն է, որը ցավոք իշխանությունների և այսպես ասած օլիգարխիայի կամայականությունների, չարաշահումների պատճառով, ներկա անել վիճակում է հայտնվել: Այս կացության համար բոլորս ենք ինչ որ չափով պատասխանատու, նաև մենք սփյուռքահայերս:

Երկու պատճառով: Վերջերս իմ պոլսահայ ընկերներից մեկը, առանց այլևայլի ասաց. «Ներկա Հայաստանը իմ Հայրենիքս չէ»: Ժամանակին Շահան Շահնուրն է նկատել, որ այն հայ մտավորականը, ով ցնցոտիներով մինչև Տեր Չոր էր գնացել, Սովետական Հայաստանը իր հայրենիքը չէր համարում: Սա շատ բան է ասում: Հենց այս մտայնությունն էլ բացատրում է, թե ինչու է սփյուռքահայությունը այսօր այդքան ամուր կառչած մնացել ցեղասպանության ճանաչումից: Բայց նման մտածելակերպը և նման կեցվածքը, մի սոսկալի «թակարտ» է, ինչպես Հրանդ Դինկն է նշում, որի մեջ ընկած, սփյուռքահայությունը (արևմտյան հատվածը) այնտեղից դուրս գալ չի կարողանում, իսկ այդպիսով հայ ժողովուրդը կորցնում է հնարավորը, պատեհ առիթը, հետաքրքրված լինել, օգնել, կառուցել այնպիսի Հայաստան, գիտության, արվեստի, տեխնիկայի այնպիսի զարգացած երկիր, որ ամեն մի հայ էլ հպարտանա այն իր հայրենիքը կոչելու: Իսկ որ հայ ժողովուրդը այդ նախադրյալները ունի, դա շեշտելու հարկ չկա, միայն թե պետք է միասնական գործելու ցանկություն, հավատ ու կամք լինի: Ամենից առաջ Հայաստանում հասնել իսկական ժողովրդավարական պետության հաստատման:

Ընկերներիցս մեկը հավատացած է, որ առանց հեղափոխության, դա անհնար է: Այո հեղափոխություն, բայց ոչ բռնի ուժերով: Արաբական երկրների երիտասարդությունը փաստեց, որ այսօր նաև խաղաղ ճանապարհներով էլ դա հնարավոր է:

Այսօր Բաֆֆի Հովհաննիսյանի գլխավորությամբ սկսվել է մի շարժում, որին սատարել է պետք: Ես խորհուրդ կտայի իմ ընկեր՝ Սարգիս Հացաբանյանին և մյուսներին, ովքեր ցանկանում են նրա Շարժումը համաժողովրդական տեսնել և երբ նա կես միլիոնանոց ցույց կազմակերպեց, իրենք էլ կմասնակցեն, ապա հեռուն չկանգնեն, պետք է միասնական ուժերով հասնել Հայաստանի ժողովրդի, բոլորից առաջ երիտասարդության «կես միլիոնանոց» ցույցերի կազմակերպմանը և հարկ եղած պարագայում՝ խաղաղ ելքի երաշխիքով, հասարակական ու պետական շենքերի գրավումով, միասնաբար պահանջ ներկայացնել Հայաստանի իշխանություններին, հրաժարական տալ և ճանապարհ հարթել, նոր խորհրդարան, նոր նախագահ, նոր կառավարություն ընտրելու համար: Իսկ մենք սփյուռքահայերս հնարավորությունը ունենք միևնույն ժամանակ խաղաղ



միջոցներով մեր բոլոր բնակելի վայրերում ցույցեր կազմակերպել ՀՀ դեսպանատների առաջ և եթե ավելի ծայրահեղ ենք, ապա գրավել այն և այդպիսով մեր համերաշխությունը հայտնել Հայաստանի Հանրապետության ոտքի ելած բնակչության հետ:

Գիտեմ, այս խոսքերը շատերի համար ուտոպիա են հնչելու, բայց այսօր պատեհ առիթը բաց թողնելը, կնշանակեր, մի անգամ ևս պարտություն կրել:

Որպես սկիզբ ես այստեղ նախ և առաջ կոչ եմ անում Բեռլինում ապրող բոլոր հայաստանցի և բեռլինահայ երիտասարդությանը՝ կազմակերպվել դեսպանատան առաջ ցույցի համար, մեր պահանջը հստակ է լինելու, միայն թե, պետք չէ սպասել, որ մյուսները ներկայացնեն այն:

